ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0,ՀՀ,գ.Զանգակատուն

# ՈՐՈՇՈՒՄ

№ 10 09.03.2021թ.

## ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ № 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է `

Հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1. Զանգակատուն համայնքի ավագանու No-3 նիստի օրակարգը հաստատելու մասին:
(զեկուցող` համայնքի ղեկավար Հ.Կարապետյան)

2. ՀՀ Կառավարության սուբվենցիոն ծրագրին մասնակցությանը հավանություն տալու մասին:
(զեկուցող` համայնքի ղեկավար Հ.Կարապետյան)

3. Զանգակատուն համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ վաճառքով օտարելու և հողամասի մեկնարկային գինը սահմանելու մասին:
(զեկուցող` համայնքի ղեկավար Հ.Կարապետյան)

4. Զանգակատուն համայնքի բնակիչ Պարքև Պետիկի Հովհաննիսյանի /ծնված 27.09.1965 թ./ կողմից Զանգակատուն համայնքի Երևան-Մեղրի մայրուղի փողոց թիվ 7 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
(զեկուցող` համայնքի ղեկավար Հ.Կարապետյան)

5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 9 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Զանգակատուն համյանքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) հաստատելու մասին:
(զեկուցող` համայնքի ղեկավար Հ.Կարապետյան)

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈՂՄ`

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Ա.Մայիլյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ. ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ______ Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0,ՀՀ,գ.Ջանգակատուն,Պ.Սևակի 50

# ՈՐՈՇՈՒՄ

№ 11

09.03.2021թ.

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 25-րդ կետով , ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է `

Հավանություն տալ Ջանգակատուն համայնքի մասնակցությանը համայնքի ղեկավարի կողմից առաջարկված սուբվենցիոն ծրագրին :

Ավագանու անդամներ կողմ

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Ա.Մայիլյան

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` (ստորագրություն) Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0 Արարատի մարզ գ. Զանգակատուն Պ.Սևակի 50,

# ՈՐՈՇՈՒՄ

№ 12 09.03.2021թ.

## ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Աճուրդ-վաճառքի միջոցով օտարել Զանգակատուն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասը՝

1 . Լոտ 1- կադաստրային ծածկագիրը՝ 03-043-0106-0166 , 2.17 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր :

1. Աճուրդ- վաճառքի միջոցով օտարվող վերը նշված հողամասի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով:
2. Աճուրդ-վաճառքը կազմակերպել 6 ամսվա ընթացքում:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԿՈՂՄ՝

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Ա.Մայիլյան

ԴԵՄ ՉԿԱ,ՁԵՌՆՊԱՀ ՉԿԱ

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ (ստորագրություն) Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0 Արարատի մարզ գ. Զանգակատուն Պ.Սևակի 50,

ՈՐՈՇՈՒՄ

№ 13 09.03.2021թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է `

1.Ուղղակի վաճառքի միջոցով օտարել Զանգակատուն համայնքի Երևան-Մեղրի մայրուղի փողոց թիվ 7 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող կադաստրային 03-068-0345-0031 ծածկագրից 0.01276 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և նրանում Զանգակատուն համայնքի բնակիչ Պարքև Պետիկի Հովհաննիսյանի կողմից ինքնակամ կառուցված 27.84քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կետը, 54.56քմ մակերեսով ծածկը և 0.60 քմ պարիսպը: Առաջարկել Պարքև Պետիկի Հովհաննիսյանին գնման նախապատվության և սեփականության իրավունքով ձեռք բերելու շինությունները և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.01276հա մակերեսով հողամասը:

2. Ուղղակի վաճառքի միջոցով օտարվող վերը նշված հողամասի և շինության գինը կազմում է 597972 ՀՀ դրամ :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԿՈՂՄ`

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Ա.Մայիսյան

ՕԾՄ ՉԿԱ,ՁԵՌՆՊԱՀ ՉԿԱ

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե : 061 0,ՀՀ,գ.Զանգակատուն,Պ.Սևակի 50

# ՈՐՈՇՈՒՄ

№ 14-Ն 09.03.2021թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ-9 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ)ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով ,«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը , համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ-9 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Զանգակատուն համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:
2. Գլխավոր հատակագծով սահմանված ` հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին » ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան,ըստ որում.

| Զանգակատուն համայնքի հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական | 2.18 | | |
| | | | Գյուղատնտեսական | 1.15 |
| 1 | Վարելահող | 0.24 | Պտղատու այգի | 0.24 |
| 2 | Վարելահող | 0.11 | Պտղատու այգի | 0.11 |
| 3 | Վարելահող | 0.81 | Պտղատու այգի | 0.81 |
| | | | | |
| | | | Բնակավայրերի | 1.03 |
| 4 | Վարելահող | 0.52 | Տնամերձ կառուցապատման | 0.52 |
| 5 | Վարելահող | 0.49 | Տնամերձ կառուցապատման | 0.49 |
| 9 | Արոտ | 0.01 | Հասարակական կառուցապատման | 0.01 |
| | | | | |
| | Բնակավայրերի | 0.34 | | |
| | | | Բնակավայրերի | 0.34 |
| 6 | Այլ հողեր | 0.30 | Տնամերձ կառուցապատման | 0.30 |
| 7 | Այլ հողեր | 0.04 | Տնամերձ կառուցապատման | 0.04 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. Օբ. | 0.16 | | |
| | | | Արդյունաբ□, ընդերքօգտ□ և արտ□նշանակութ□օբ□ | 0.16 |
| 8 | Էներգետիկայի | 0.16 | Արդյունաբերության | 0.16 |
| Զանգակատուն համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները Չև 1 | | | | |
| Հողամաս ի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Միջազգային միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական | 3.62 | | |
| | | | Գյուղատնտեսական | 2.02 |
| 1 | Վարելահող | 0.94 | Պտղատու այգի | 0.94 |
| 2 | Վարելահող | 0.36 | Պտղատու այգի | 0.36 |
| 3 | Վարելահող | 0.73 | Պտղատու այգի | 0.73 |
| | | | | |
| | | | Հատուկ պահպանվող տարածքներ | 1.60 |
| 4 | Արոտ | 1.60 | Պատմական և մշակութային | 1.60 |

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումները՝ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին » ՀՀ օրենքի $14^{3}$ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան ՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում ,համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքային ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Ուժը կորցրած ճանաչել Զանգակատուն համայնքի ավագանու 23.07.2020 թ. N 19 որոշումը:

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԿՈՂՄ՝

_______________ Հ.Գրիգորյան
/ստորագրություն/

_______________ Ա.Սարգսյան
/ստորագրություն

_______________ Խ.Գևորգյան
/ստորագրություն/

_______________ Ա.Մայիլյան
/ստորագրություն/

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(ստորագրություն)